պ. Տ. Բէգզադեանին ու Գ. Կարա-Մուրզային, որոնք դուցէ դեռ ընտրվեն պատուիրակներ Բագուից, պէտք է ասենք, որ ցուցակից պէտք է հանել պ. պ. Յ. Սաղաթելեանին և Տ. Բէգզադեանին շատ յայտնի պատճառով։ Եթէ նոյն իսկ մի կողմ թողնենք, որ այդ անձինք օժտված չեն վերոյիշեալ յատկութիւններով, կայ մի մեծ և կարևոր պատճառ, որ հրամայողաբար պէտք է ստիպէ հայ պատուիրակներին՝ չընտրել նրանց, այն է՝ որ այդ անձինք նեղ կուսակցական մարդիկ են, հետևաբար նրանք իրանց կուսակցական շահերը միշտ գերադաս պէտք է համարեն հայ ազգի ընդհանուր, ժողովրդական շահերից։ Այդպէս գործել են նրանք մինչև այժմ, և ոչ մի պատճառ չը կայ կարծելու, որ այսուհետև նրանք կը շեղեն այդ ուղղութիւնից։ Հետևաբար, մենք միանգամայն անյարմար և անպատեհ ենք համարում դրանց ընտրութիւնը։

Ուրեմն մնում է ընտրութիւնը կատարել մնացած 4 կանդիդատների միջից, որոնք են. 1) Համբարձում Առաքելեան, 2) Միքայէլ Պապաջանեան, 3) Յովսէփ Տիգրանեան, 4) Յովհաննէս Մելիք-Աղամալեան, 5) Միք. Աթաբէգեան և 6) Գ. Դոլուխանեան։ Առաջին չորսը յայտնի են հայ հասարակութեանը իրանց գործունէութեամբ, առաջին երկուսը իբրև քաղաքագլուխներ և վերջին երկուսը իբրև իրաւասուներ՝ Երևանում, Ալէքսանդրապոլում և Թիֆլիսում։ Սակայն մեզ յայտնի չէ, թէ Յ. Մելիք-Աղամալեանը ունի՞ ցանկութիւն քուէարկվելու և նրա անունը չէ յիշվել մինչև այժմ կանդիդատների շարքի մէջ, թէև նա, անկասկած, ունի որոշ արժանիքներ, իբրև փորձված անձ։ Մեզ թւում է, որ վերջ ի վերջոյ ընտրող պատուիրակները պէտք է կանգ առնեն այդ վեց կանդիդատների վրա, որոնք առաւել կամ նուազ չափով օժտված են հայ պատգամաւորի համար պահանջված յատկութիւններով։ Սակայն, անկասկած, այդ վեցի մէջ ամենից ձեռնհասը և յարմարագոյնը Հ. Առաքելեանն է, որ իբրև երկարամեայ ազգային գործիչ, իբրև գրող և հրապարակախօս քաջ ծանօթ է ոչ միայն Ռուսաստանի, այլ և Թիւրքիայի, Պարսկաստանի հայ ժողովրդի կեանքին, կարիքներին ու պահանջներին, որ իր լեզուագիտութեամբ, իր աշխատութիւններով յայտնի է և եւրոպական գործիչների որոշ շրջաններին, գլխաւորապէս նրանց, որոնք հետաքրքրվում են հայ ազգի կեանքով և որ իր ուղղութեամբ նացիոնալ-պրօգրեսիստ է (ինչպէս յայտնեց և «Рѣчь» թերթը), հետևաբար պատկանում է այն ուղղութեան, որ ներկայումս հայ ժողովրդի համար ամենաօգտակարն և յարմարն է։

Վերջապէս Հ. Առաքելեան աւելի լայն և մեծ ժողովրդականութիւն ու ծանօթութիւն ունի հայ ազգի մէջ, քան մնացեալ բոլոր կանդիդատները։

Ուստի, մեր կարծիքով, ներկայ պարագաներում ամենայարմար ընտրելին կը լինի Հ. Առաքելեանը, իսկ նրա հրաժարման դէպքում, պէտք է ընտրել կամ Յովհ. Մելիք-Աղամալեանին, կամ Մ. Պապաջանեանին և կամ Յ. Տիգրանեանին։

Այժմ մնում է, որ ընտրող պատուիրակները, կշռելով բոլոր հանգամանքները, պայմանները, անսալով իրանց խղճի թելադրութեան և ի նկատի ունենալով հայ ժողովրդի ընդհանուր շահերը՝ կենտրոնացնեն իրանց քուէները այդ չորս կանդիդատներից մէկի վրա։ Գ. Խ.

Երևան

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆԸ

II

Էջմիածին, 15 հոկտեմբերի

Երէկ, կիրակի, հոկտեմբերի 14-ին, առաւօտեան ժամը 10-ին, տաճարի զանգակների մեղեդիական ղօղանջիւնները յայտնեցին, որ սկսվում է Վեհափառի հանդիսաւոր երթը վեհարանից տաճար։

Տաճարը լցված էր խուռն բազմութեամբ. գեղեցիկ եղանակը գրաւել էր շրջականերից շատերին, որոնք եկել էին մասնակցելու ի յիշատակ ս. Սահակի, Մեսրոպի և Թարգմանիչների կատարվելիք հոգեհանգստին։

Պատարագիչն էր Սահակ արքեպիսկոպոս Այվատեան. երգում էր ճեմարանի երգեցիկ խումբը։

Հանդիսաւոր էր և տպաւորիչ, երբ հայոց եկեղեցու պետը, շրջապատված ծերունի արքեպիսկոպոսներով, եպիսկոպոսներով և վարդապետներով, կատարեց հոգեհանգիստ հայ նշանաւոր ազգային-եկեղեցական գործիչների յիշատակին։ 1500 և 400 տարիներից յետոյ Էջմիածնի տաճարում ամբողջ հայ ժողովուրդը, ի դէմս իր Հայրապետի և ներկայացուցիչների, իր երախտական անկեղծ զգացումներն էր արտայայտում հանդիսաւոր կերպով ազգային վերածնութեան նշանաւոր գործիչներին։

Նոյն օրը, երեկոյեան ժամը 7-ին, ճեմարանի մեծ դահլիճում կայացաւ, ի պատիւ մեծ յոբելեանի, հանդիսաւոր երեկոյթ, որին նախագահում էր Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ V-ը, շրջապատված իր արքեպիսկոպոսներով, եպիսկոպոսներով, վարդապետներով, դրսից եկած պատգամաւորներով, ճեմարանի ուսուցչական, աշակերտական խմբերով և Վաղարշապատի հասարակութեան խուռն բազմութեամբ, որքան մեծ և ութանկիւն դահլիճը կարող էր տանել։

Երեկոյթը բացեց Կաթողիկոսը «Հայր մերով», որին հետևեց երգեցիկ խմբի «Ընմանեալ Մովսէսի» շարականը։

Ապա ճեմարանի տեսուչ Բագրատ վարդապետը մի գեղեցիկ ատենաբանութիւն արեց, պարզելով տօնի նշանակութիւնը և վերջում ևս յայտարարեց, թոյլտւութեամբ Կաթողիկոսի, որ դպրոցական ֆոնդի հիմքը դնում է ինքը Մայր Աթոռը՝ նուիրելով 15,000 ռուբլի։ Հայր տեսչի ատենախօսութիւնը խոր ազդեցութիւն գործեց։ Ատենախօսութիւնների մէջ ընդ մէջ ճեմարանի երգեցիկ խումբը և աշակերտները երգում էին ազգային և ժողովրդական երգեր ու արտասանում էին ոտանաւորներ։ Ճեմարանի ուսուցիչ՝ Ս. Կանայեան կարդաց մի ակադեմիական ռեֆերատ այն մասին, թէ «որտեղ է ս. Մեսրոպի քարոզած Մարաց աշխարհը»։ Յոբելեանական յանձնաժողովի անդամ Գ. Ալթունեան կարդալով և թւելով ստացված շնորհաւորական հեռագիրները՝ երկար կանգ առաւ, թէ ինչու Էջմիածինը որոշեց հիմնել դպրոցական ֆոնդ։ Նա իր ճառի մէջ ցաւ յայտնեց նաև, որ մի որոշ հատուած չէ մասնակցում ազգային մեծ տօնախմբութեան, և այն կարծիքն յայտնեց, թէ այդպիսի վերաբերմունքը լոկ թիւրիմացութեան արդիւնք է, արդիւնք որոշ հայեցակէտի։ Ստ. Մալխասեանց խօսեց «սուրբ Մեսրոպի տեսիլքի» մասին, իսկ Ա. Քալանթար խօսեց՝ «Տառերի գիւտը իբրև վերածնութեան գործօն» թեմայի վրա։

Հանդէսը թողեց գեղեցիկ և հաճելի տպաւորութիւն ամենքի վրա։

Հանդէսից յետոյ ճեմարանի մի այլ սրահում տեղի ունեցաւ ընթրիք ի պատիւ պատգամաւորների և առհասարակ տօնի։ Սեղանապետ ընտրվեց Ս. Կանայեան։ Սեղանակից էին մօտ 50 անձինք։ Այստեղ ևս բաժակաճառեր առաջարկվեցին և ատենախօսութիւններ կատարվեցին։ Կարապետ եպիսկոպոս, Բագրատ վարդապետ, Ալ. Քալանթար, Թորոսեան, Սիօն վարդապետ, Եր. Շահազիզ, Ալթունեան՝ առաջարկեցին բաժակներ հայ ժողովրդի կուլտուրական վերածնութեան, ճեմարանի, հայոց դպրոցների և Էջմիածնի բարգաւաճման համար։ Ճեմարանի տեսուչ Բագրատ վարդապետ իր պատասխան-ճառի մէջ յայտնեց, որ ճեմարանը իր սրտին ամենամօտիկ մի հաստատութիւն է, որի բարգաւաճման նա նուիրելու է իր բոլոր ոյժերը։ Ի վերջոյ ամենքի կողմից իղձ յայտնվեց, որ եկող տարի հոկտեմբերի 13-ին հայ ժողովուրդը կարողանայ համազգայնօրէն կատարել մեծ տօնը, իսկ հայ ինտելիգենցիան աշխատէ ամբողջ տարվայ ընթացքում ժողովրդականացնել մեծ տօնի գաղափարը։

Ժամը 12-ին բոլոր հանդիսականները մեկնեցին գեղեցիկ յիշատակ տանելով տօնախմբութեան հանդէսներից։

Այսպէս սկսվեց և վերջացաւ ազգային մեծ յոբելեանի բացումը և նախատօնակը Էջմիածնում և Օշականում։

Երկրորդ օրը եկած պատգամաւորները, ներկայանալով Վեհափառին, մատուցին իրանց հրաժեշտը։ Օրհնելով ամենքին, Վեհափառը պատուիրեց իր հայրապետական օրհնութիւնն և շնորհակալութիւնը յայտնել ամենքին և առանձնապէս Թիւրքիայի հայոց ազգ. կեդր. վարչութեան Ուսումնական Խորհրդին, Միացեալ Ընկերութեանը և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեանը։

Տօնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը ստացել է բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ Ռուսաստանի և արտասահմանեան հայոց զանազան եկեղեցական, կուլտուրական, լուսաւորական, կրթական հաստատութիւններից և զանազան անձերից, միևնոյն ժամանակ հեռագրական զեկուցումներ՝ զանազան քաղաքներում և դպրոցներում կատարված հոգեհանգիստների, մաղթանքների և հանդէսների մասին։

Ա.

—

Ահա Ա. Քալանթարի Գէորգեան ճեմարանի մէջ կազմած երեկոյթին արտասանած բանախօսութեան ամփոփումը.

«Իմ բանախօսութիւնը նուիրված է գրերի գիւտին, իբրև վերածնութեան գործօնի մեր ազգի կեանքում։

«Հայ գիրը թէ իր երևալու սկզբնական քայլերում և թէ յաջորդ դարերում կատարել է գաղափարական վերածնութեան նըպաստող ազդեցիկ գործօնի խոշոր դեր։

«Հայ այբուբենը ոչ միայն ժողովրդականացրեց Նազովրեցի Մեծ Քարոզչի վեհաշուք ուսմունքը մեր մէջ, այլ և ճանապարհ բացեց բոլոր այն ուսմունքների համար, որոնց հասել էին փիլիսոփաները Յունաստանում, Ասորիքում, Եգիպտոսում և Հռոմում, մուտք գործելու հայ երկրի մէջ և ծանօթացնելու մեր ուսումնատենչներին աշխարհի լաւագոյն իմաստասէր մտածողութեան հետ։

«Այն ժամանակ, երբ հայ գրերը գտնվեցին, հին աշխարհը ապրում էր եռուն մտաւոր կեանքով։ Ալէքսանդրիայի, Աթէնքի, Հռոմի փիլիսոփաները և գիտնականներն ուսումնասիրում էին պատմութիւնը, աշխարհագրութիւնը, իրաւաբանութիւնը, բարոյագիտութիւնը, քննութեան էին ենթարկում